ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՐ ՄԱՅՍՈՒՐՅԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Արթուր Մայսուրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ էկոնոմիկայի նախարարության ԵՄ հետ տնտեսական համագործակցության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք), 2022թ. հուլիսի 4-8-ը

4. **Հրավիրող կողմը.**

   ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողով (UNCITRAL)

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) 55-րդ նստաշրջանին:

6. **Քննարկված թեմաները.**

   UNCITRAL-ի 55-րդ նստաշրջանի շրջանակներում հուլիսի 5-ից 7-ը կայացած նիստերում քննարկվել են օրակարգում ներառված հետևյալ հարցերը

   - «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքի նախագիծը,
   - Տիպային օրենքի նախագծի բացատրական նշումների նախագիծը,
   - UNCITRAL-ի չորրորդ աշխատանքային խմբի (WG IV– Electronic Commerce) 62-րդ և 63-րդ նստաշրջանների զեկույցները՝ կատարված աշխատանքների և արդյունքների վերաբերյալ,
   - Էլեկտրոնային առևտրին և թվային տնտեսությանն առնչվող այլ իրավական հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) 55-րդ նստաշրջանի շրջանակներում հուլիսի 5-ից 7-ը կայացած նիստերին («Թվային տնտեսության շաբաթ») մասնակցում էին 60-ից ավել անդամ երկրների ներկայացուցիչներ, ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների և միջազգային ֆինանսական կառույցների

ներկայացուցիչներ (ի դեպ, Հայաստանի Հանրապետությունը UNCITRAL-ի անդամ է դառել 2022թ. հունիսի 27-ից):

Նստաշրջանի օրակարգի հիմնական հարցերից մեկը «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքի նախագծի (A/CN.9/1112) քննարկումն ու ընդունումն էր: Տիպային օրենքի նախագծի մշակումը սկսվել է UNCITRAL-ի չորրորդ աշխատանքային խմբի (WG IV–Electronic Commerce) դեռևս 55-րդ նիստի շրջանակներում և շարունակվել է 2022թ. ապրիլի 4-8-ը կայացած 63-րդ նիստում, որտեղ էլ որոշվել է տիպային օրենքի նախագիծը ներկայացնել UNCITRAL-ի 55-րդ նստաշրջանի հաստատմանը:

Նպատակ ունենալով ամբողջական ամփոփելու և վերջնականացնելու տիպային օրենքի նախագիծը՝ նստաշրջանի ընթացում կայացան համապարփակ և հանգամանալից քննարկումներ՝ UNCITRAL-ի անդամ երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ: Մանավորապես՝ քննարկվել են տիպային օրենքի նախագծի այն հոդվածները, որոնց վերաբերյալ անդամ երկրների կողմից ներկայացվել էին լրացուցիչ նկատառումներ, ինչպես նաև այն հարցերը, որոնք վերջնական չէին համաձայնեցվել աշխատանքային խմբի 63-րդ նստաշրջանում: Յուրաքանչյուր հոդվածի և հարցի շրջանակներում կայացան մանրամասն քննարկումներ, դիրքորոշումների ներկայացումներ՝ համաձայնություններ ձեռք բերելու նպատակով: Մասնավորապես, կայացած քննարկումների արդյունքում՝ հոդված 1-ի շրջանակներում հստակեցվեցին «էլեկտրոնային նույնականացում» և «Նույնականացման տվյալների կառավարման համակարգեր» սահմանումները, հոդված 5-ում կատարվեց համապատասխան լրացում, հոդված 6-ի տեքստը փոփոխվեց՝ նույնականացման տվյալների կառավարման ծառայություններ մատուցողների պարտավորություններին առնչվող երրորդ կողմերի մասով, ուղղումներ կատարվեցին հոդվածներ 7-ում և 8-ում:

Առավել հանգամանորեն և բուռն քննարկումներ կայացան հոդվածներ 9-ի և 10-ի շրջանակներում: Անդամ երկրները տարաձայնություններ ունեին հոդված 9-ի շրջանակներում՝ հոդված 10-ին կատարվող հղման տեքստի մասով, որով պետք է ապահովվեր հոդվածների դրույթների իրականացումը: Կայացած լրացուցիչ խորհրդակցությունների արդյունքում ձևավորվեց տեքստի փոխզիջումային տարբերակ, որն էլ ընդունելի էր բոլորի կողմից: Խմբագրումներ արվեցին նաև հոդվածներ 21, 22, 25 և 26-ում: Հոդված 25-ի մասով երկրների կողմից ներկայացվեցին այլընտրանքային տարբերակներ, որոնց քննարկումների և խորհրադակցությունների արդյունքում փոխզիջումային տարբերակ ձևավորվեց:

Այսպիսով, ամբողջացվեց էլեկտրոնային նույնականացումը որպես ամբողջական գործընթաց կամ գործընթացի մի մաս դիտարկելը, գործընթացի քայլերը, ինչպես նաև երկրների կողմից դրանց օգտագործման տեղայնացումն և հետագա հնարավոր վեճերի կարգավորումը: Տեքստում հստակ ամրագրվեց

կիրառվող մեթոդի առավել հուսալիության մոտեցումը, քանի որ դրա բացակայության պարագայում նույնականացումը հաջողությամբ չի իրականացվի, որն էլ կբերի իրավական խառնաշփոթի և հնարավոր հետագա վեճերի: Հստակեցվեցին վեճերի կարգավորման պարագայում դատական մարմինների և այլ որոշում կայացնող օրգանների հնարավոր ներգրավվածությունը և երկրների իրավունքը՝ դրանց ներառումը երկրների ազգային օրենսդրություններում: Հատկապես կարևորվեց հուսալիության համարժեք մակարդակների ապահովումը նմանատիպ նույնականացման ծառայությունների մատուցման ժամանակ, այդ թվում՝ միասնական ստանդարտների կիրառման անհրաժեշտությունը անդրսահմանային ճանաչման գործընթացներում:

Արդյունքում՝ ամբողջացվեց և համաձայնեցվեց «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքի նախագիծը (A/CN.9/1112) և այն ընդունվեց UNCITRAL-ի 55-րդ նստաշրջանում:

Նստաշրջանը շարունակեց իր աշխատանքները՝ քննարկելով Տիպային օրենքի բացատրական նշումների նախագիծը: Նախագծի առնչությամբ ստացվել էին բազմաթիվ առաջարկություններ: Կայացած քննարկումների արդյունքում համաձայնեցվեցին նախագծի մի շարք դրույթներ և հոդվածներ: Այնուամենայնիվ, մի շարք կետերի մասով անհրաժեշտություն առաջացավ հետագա լրացուցիչ հստակեցումների: Ուստի, նստաշրջանը որոշեց սկզբունքային հավանություն տալ «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքի Բացատրական նշումների նախագծին, խնդրեց քարտուղարությանը պատրաստելու վերջնական տարբերակը և լիազորեց IV աշխատանքային խմբին՝ 2022թ աշնանը կայանալիք 64-րդ նիստի ընթացքում վերանայել անհրաժեշտ դրույթները՝ համադրելով տիպային օրենքի հետ:

Նստաշրջանը հանձնարարեց նաև UNCITRAL-ի քարտուղարությանը՝ ապահովել «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքի և դրա բացատրական նշումների թարգմանությունը վեց լեզուներով և դրանց տարածումը երկրների կառավարությունների և շահագրգիռ մարմինների շրջանակներում:

Միևնույն ժամանակ, խորհուրդ է տրվել երկրներին՝ համապատասխան ազգային օրենսրությունների ընունման կամ փոփոխությունների ժամանակ ուշադրության արժանացնել և օգտագործել «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքը:

ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի 55-րդ

նստաշրջանի օրակարգային մյուս հարցերի շրջանակներում ներկայացվեցին UNCITRAL-ի չորրորդ աշխատանքային խմբի նախորդ՝ 62-րդ նիստի (2021թ. նոյեմբերի 22-26-ը) և 63-րդ նիստի (2022թ. ապրիլի 4-8-ը) զեկույցները՝ կատարված աշխատանքների, արդյունքների և զարգացումների վերաբերյալ: Նստաշրջանը ամրագրեց աշխատանքային խմբի կողմից կատարված մեծածավալ աշխատանքը, ընդգծեց անդամ երկրների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը, կարևորեց աշխատանքային խմբի կողմից ձևավորված փաստաթղթերը և ընդգծեց գործընթացի հետագա արդյունավետ շարունակականության ապահովման անհրաժեշտությունը:

Նստաշրջանի հետագա աշխատանքների ընթացքում քննարկվեցին էլեկտրոնային առևտրին և թվային տնտեսությանն առնչվող մի շարք այլ իրավական հարցեր: Մասնավորապես, ներկայացվեցին և քննարկվեցին աշխատանքային խմբի շրջանակներում ընթացող գործընթացները՝ պայմանագրերի կնքման ընթացքում ավտոմատացման համակարգերի կիրառման և տվյալների հետ գործողությունների իրականացման շրջանակներում (այս ուղղություններով աշխատանքային խմբի շրջանակներում կան ձևավորված փաստաթղերի նախագծեր): Նստաշրջանում ընդգծվեց, որ այս երկու ուղղությունները փոխադարձաբար կախված են միմյանցից և փոխադարձաբար լրացնում են իրար, ուստի նպատակահարմար համարվեց աշխատանքները շարունակել միաժամանակ՝ զուգահեռաբար: Նստաշրջանը լիազորեց աշխատանքային խմբին այդ աշխատանքների իրականացումը ապահովել՝ նշելով նաև այդ ընթացքում UNCITRAL-ի գործող իրավական դաշտի հետ համադրության անցկացումը: Կարևորվեց նաև աշխատանքների հետագա քայլ առ քայլ հստակ իրականացումը և առաջարկվեց խմբին հետագա աշխատանքի ընթացքում առաջնորդվել տեխնոլոգիական չեզոքության և էլեկտրոնային միջոցների կիրառման նկատմամբ ոչ խտրականության սկզբունքներով, հիմք ընդունելով կիրառման գործնական օրինակներն ու պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով զարգացող երկրների յուրահատկությունները:

Նստաշրջանի շրջանակներում՝ ՄԱԿ-ում Կորեայի մշտական ներկայացուցչության հետ համատեղ UNCITRAL-ը կազմակերպել էր «UNCITRAL-ը և թվային առևտրի օրենքը» միջոցառումը: Այն նպատակ ուներ ներկայացնել և տեղեկատվություն տրամադրել երկկողմ, բազմակողմ և տարածաշրջանային թվային առևտրի բանակցությունների վերաբերյալ, ինչպիսիք են քննարկումները Առևտրի Համաշխարհային Կազմակերպության էլեկտրոնային-առևտրի միասնական հայտարարության նախաձեռնության, Թվային տնտեսության գործընկերության համաձայնագրերի կամ միջազգային առևտրային համաձայնագրերի թվային համագործակցության բաժինների և թվային առևտրային համաձայնագրերի իրականացման շրջանակներում UNCITRAL-ի իրավական ենթակառուցվածքի վերաբերյալ: Միջոցառմանը մասնակցեցին և ելույթներով և ներկայացումներով հանդես եկան UNCITRAL-ի քարտուղարության ներկայացուցիչներ. միջազգային փորձագետներ և տարբեր երկրների պաշտոնյաներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նստաշրջանի ընթացքում կայացած քննարկումների արդյունքում որոշվել է.

- Ընդունել «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքը (A/CN.9/1112):
- Սկզբունքային հավանություն տալ «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքի Բացատրական նշումների նախագծին, խնդրել քարտուղարությանը պատրաստելու վերջնական տարբերակը և լիազորել աշխատանքային խմբին՝ 2022թ.-ի աշնանը կայանալիք 64-րդ նիստի ընթացքում վերանայել անհրաժեշտ դրույթները:
- Ապահովել «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքի և դրա Բացատրական նշումների թարգմանությունը վեց լեզուներով և դրանց տարածումը երկրների կառավարությունների և շահագրգիռ մարմինների շրջանակներում:
- Խորհուրդ տալ երկրներին՝ համապատասխան ազգային օրենսրությունների ընունման կամ փոփոխությունների ժամանակ ուշադրության արժանացնել և օգտագործել «Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքը:
- Լիազորել UNCITRAL-ի չորրորդ աշխատանքային խմբին՝ հետագա նիստերի ընթացքում զուգահեռաբար ապահովել՝ պայմանագրերի կնքման ընթացքում ավտոմատացման համակարգերի կիրառման և տվյալների հետ գործողությունների իրականացման ուղղություններով ընթացող աշխատանքները
- UNCITRAL-ի 55-րդ նստաշրջանի շրջանակներում հուլիսի 5-ից 7-ը կայացած նիստերի («Թվային տնտեսության շաբաթ») արդյունքում փաստաթուղթ չի ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝

Կարևորել և ապահովել հայկական կողմի հետագա անմիջական և շարունակական մասնակցությունը UNCITRAL-ի չորրորդ աշխատանքային խմբի նիստերին և համապատասխան ոչ պաշտոնական հանդիպումներին:

«Նույնականացման տվյալների կառավարման և հավաստագրման ծառայությունների օգտագործման և անդրսահմանային ճանաչման» տիպային օրենքը և նրա բացատրական նշումները ներկայացնել ՀՀ շահագրգիռ մարմիններին՝ ոլորտի իրավական փաստաթղթերի հետ հետագա աշխատանքներում դրանք օգտագործելու նպատակով:

Ապահովել UNCITRAL-ի չորրորդ աշխատանքային խմբի հետագա նիստերի շրջանակներում նախատեսված փաստաթղթերի տեքստերի քննարկման ընթացքում հայկական կողմի նկատառումների և առաջարկությունների ամփոփումը և միասնական դիրքորոշումների ձևավորումն ու ներկայացումը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Հրաչյա Աղասյան

Հ. Աղասյան